

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ, ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ,
ՀԱԿՈԲ ԽԱԹԼԱՄԱՋՅԱՆ, ՍԱՍՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԼՆԻ ՉԱԼԹՐ ԳՅՈՒՂԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Չալթր հայկական մեծ գյուղը ՌԴ Դոնի Ռոստովի մարզի հայաբնակ Մյասնիկյանի (Մյասնիկովսկի) շրջանի վարչական կենտրոնն է։ Հայտնի է, որ այն հիմնադրել են Եկատերինա Բ. կայսրուհու (1762—1796 թթ.) հրամանով 1778 թ. Ղրիմից Դոնի ավազան գաղթած հայերը։ Նորաստեղծ բնակավայրը Չալթր անվանումն ստացել է համանուն գետակի անունից, որի ափին հաստատվել են Ղրիմի Օրթալանկ գյուղի բնակիչները²։

Վ. Բարխուդարյանի վկայակոչմամբ՝ «Ակադեմիկոս Ս. Պալլասը, 1793 թ. ճամփորդության ժամանակ անցնելով Չալթր գյուղի փոստային գծով, թողել է ուշագրավ դիտողություններ։ Նա նկատում է, որ գյուղը բաղկացած էր 90 տնից, որոնց մեծ մասը եկեղեցիների նման կառուցված էր սրբատաշ քարից ու կավից։ Տները կառուցել էին Ղրիմի իրենց բնակարանների ձեռով։ Անցնելով օջախի (բուխարա, կրակարան) մոտից՝ մտնում ես երկու շատ մաքուր սենյակներ՝ ցածր պառկելատեղով։ Բակում տեղավորված էին մյուս հարմարությունները՝ խոհանոցը, նկուղը եւ այլն»³։ Դ. Վարդումյանը գրում է, որ Չալթր գյուղը «նախապես տեղավորված է եղել փոքր գետակի ափերի բլրալանջերին եւ շատ բանով դեռեւս հիշեցրել է հայկական բնակավայրերը՝ տները դասավորված են եղել միմյանց մոտ ազգակցական թաղերի սկզբունքով։ Հին ազգակցական թաղերի մնացուկները դեռեւս պահպանվում են գյուղի այդ մասում։ Հետագայում, հատկապես սովետական տարիներին, գյուղը տարածվել է մերձակա

¹ Սույն աշխատանքը կատարվել է Նոր Նախիջեւանի հայոց համայնքի եւ նրա այլէթնիկ միջավայրի հետ եղած կրոնամշակութային կապերին նվիրված պատմաազգագրական հետազոտության շրջանակում, որը ֆինանսավորվել է Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդարանի կողմից՝ ՀՀ Գիտակերպման միջոցով։

² Տե՛ս Օ. Халпахчьян, Архитектура Нахичевани-на-Дону, Ереван, 1988, էջ 10։

³ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Երեւան, 1967, էջ 94։

հարթավայրում, խիստ ընդարձակվել եւ գրեթե միացել է հարեւան Ղրիմին (Թոբզի), որը նույնպես իր հերթին տարածվել է դեպի Չալթր: Այդ ընթացքում խիստ փոխվել է բնակավայրերի հատակագիծը՝ բնակարանները դասավորվել են խճուղիների ու փողոցների կամ, ինչպես տեղում ընդունված է ասել, «գծերի» («*Линия*») երկայնքով, որն ակնհայտորեն ռուսական գյուղական բնակավայրերի կառուցապատման ազդեցության արդյունք է»⁴: Ազգագրագետի ենթադրությամբ՝ «Ղրիմից այստեղ գաղթելուն պես, ըստ երեւույթին, կառուցվել է հիմնականում երկու տիպի բնակարան՝ քաղաքատիպ-կղմինդրածածկ եւ գյուղատիպ՝ ճլախոտով ծածկված»⁵:

Եկատերինա Բ. կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով, Ղրիմի թերակղզուց Դոնի անմարդաբնակ տափաստաններ գաղթած հայերին տրված բազմակողմանի արտոնությունների (առևտրատնտեսական, տեղական ինքնակառավարման, ազգային-կրթական, եկեղեցադավանական եւ այլն) ու նորաբնակների՝ տեղում համակերպվելու հաստատակամության, համառ աշխատասիրության շնորհիվ արդեն քառորդ դար անց Չալթր գյուղի տների թիվն ավելի քան կրկնապատկվում է. 1817 թ. Վենետիկի Մխիթարյան միաբան Մինաս Բժշկյանը, շրջագայելով Նոր Նախիջևանի հայկական հինգ գյուղով, նշում է, որ «Հօրդալանկ. ունի 200 տունս Հայոց, եւ զեկեղեցի յանուն Համբարձման»⁶: Վարդապետը չի մոռանում հայտնել նաեւ հայկական այդ գյուղերի (Չալթր, Թոփտի [Ղրիմ], Մեծ Սալա, Փոքր Սալա [Սուլթան Սալա], Նիսվիթա) բնակիչների ընդհանուր թիվը 1817 թվականին՝ 2815 բնակիչ⁷: Ուշադրության արժանի է փաստը, որ Մ. Բժշկյանը Չալթրը կոչում է նրա ղրիմյան անվանմամբ: Դրանից հետեւում է, որ տեղացիները մի տեւական ժամանակ իրենց գյուղի անվանակոչության մեջ երկու ձեւն էլ գործածել են, ինչն անգամ այսօր տարածված սովորություն է հայկական միջավայրում առհասարակ:

Չալթրի աշխարհագրական դիրքը մեծապես նպաստում է տեղի բնակչության թվաքանակի անընդհատ աճին, որը վճռորոշ նշանակություն պետք է ունենար նրա՝ հայկական գյուղկենտրոն ճանաչվելու

⁴ Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ, Ռոստովի մարզի հայերի մշակույթի եւ կենցաղի նմուշներ, ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր. հասարակական գիտություններ», թ. 12, Երեւան, 1961, էջ 92:

⁵ Անդ:

⁶ «Ճանապարհորդությունն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոյ ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք Տն. Հ. Մինասայ Բժշկեանց վարդապետի ի Մխիթարեան ուխտէն, առաջնորդի ի Տաւրիա», Վենետիկ, 1830, էջ 394:

⁷ Տե՛ս անդ:

գործում: Վ. Բարխուդարյանն իր աշխատություններում ներկայացնում է Չալթրի բնակչության աճի ուշագրավ տարեգրությունը. 1793 թ.⁸ 405 բնակիչ, 1835 թ.⁹ 1375, 1850 թ.¹⁰ 1744⁸: Հետաքրքիր է, որ մեկ տասնամյակում՝ 1897–1907 թթ., Չալթրի բնակչությունը 5206-ից հասել է 6545-ի, իսկ 1913–1914 թթ. գյուղն ուներ 7117 բնակիչ⁹: Գյուղացիները հիմնականում զբաղվել են հացահատիկի մշակամամբ: Չալթրի սպիտակ ցորենը պահանջված է եղել: Աշխարհահռչակ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը գրում է. «Չալթրյան եւ ղրիմյան հայերը հայտնի էին որպես լավ հողագործներ: Նրանց ցորենը (գարնովկա) իր որակով հայտնի էր նույնիսկ փարիզյան հացավաճառներին....»¹⁰:

Չալթրը, ինչպես եւ Դոնի հայկական մյուս չորս գյուղը, թեեւ հեռու են գտնվել Հայաստանից, բայց մշտապես եղել են Մայր հայրենիքի կողքին, սատարել են հայրենակիցներին օրհասական պահերին, իրենց նպաստը բերել համահայկական ձեռնարկներին, մասնավորապես չալթրցիներն Առաջին աշխարհամարտին կամավորագրված հայորդիներին օգնել են սնունդով եւ հագուստով¹¹: Միաժամանակ օգնություն են ցուցաբերել արեւմտահայ գաղթականությանը. «Այսպես՝ 1915 թ. գարնանը Չալթր գյուղը 600 պարկ ալյուրի հետ երկրագործական եւ գյուղացու տնտեսությանը անհրաժեշտ այլ գործիքներ է ուղարկում գաղթականներին»¹²: Ս. էջմիածնի հոգեւոր ճեմարանի կառուցման համար Չալթր գյուղը նվիրաբերել է 150 ուրբի¹³:

Չալթրցիների եկեղեցասիրությունն արտահայտվում է նրանց ջերմեռանդ ու հոգատար վերաբերմունքով գյուղի Ս. Համբարձում եկեղեցու (1871 թ.) նկատմամբ, որը գործել է անգամ խորհրդային աստվածամերժողական տարիներին՝ չհաշված Հայրենական մեծ պատերազմի ժամանակահատվածը: Չալթրի Ս. Համբարձում եկեղեցին Գ. Գրիգորյանի դիտարկմամբ՝ «...ճարտարապետական ձեւերով հարազատ չէ հայկականին»¹⁴: Դոնահայ եւ առհասարակ հայկական ճարտարապետության

⁸ Տէս Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, նշվ. աշխ., էջ 123:

⁹ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861–1917 թթ.), Երեւան, 1985, էջ 63, տողատակ 73:

¹⁰ Տէս անդ, էջ 129:

¹¹ Տէս անդ, էջ 211, 212:

¹² Անդ, էջ 215:

¹³ Տէս անդ, էջ 198:

¹⁴ «Դիվան հայ վիմագրության», պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխ.՝ Գ. Գրիգորյանի, Երեւան, 1999, էջ 151:

գիտակ Հ. Խալփախչյանի պարզաբանմամբ՝ ցարիզմի ձգտումը ազգային փոքրամասնությունների կյանքի բոլոր ոլորտներում հասնել առավելագույն ռուսացման, արտահայտվել է արվեստի այդ ճյուղում եւս¹⁵։ Նա միաժամանակ հայտնում է ուշագրավ տեղեկություն, որ Դոնի ավազանում սկզբում հայկական գյուղական եկեղեցիները կառուցվում էին փայտից, հետագայում նրանց տեղում կանգնեցվում էին քարաշեն տաճարներ¹⁶։ Դոնի գյուղերի եկեղեցիները թեեւ պատկանում են զմբեթավորների տիպին, բայց իրենց հատակագծային ու ծավալատարածական ձեւերով տարբեր են եւ ունեն առանձնահատկություններ¹⁷։ Մասնավորապես Չալթրի Ս. Համբարձում եկեղեցին առանձնանում է իր կուռ համաչափությամբ եւ նորնախիջեւանյան պաշտամունքային շինություններին հատուկ ճարտարապետական տարրերի առկայությամբ¹⁸։ Այն պատկանում է արտաքուստ եւ ներքուստ խիստ ընդգծված խաչաձեւ-զմբեթավոր շինությունների տիպին, որն ավելի է արտահայտվում արեւելյան խորանին կից ավանդատների բացակայությամբ¹⁹։ Եկեղեցին պսակված է զույգ պատուհաններ ունեցող ութանիստ զմբեթով։ Նախամուտքի քառասյուն հարդարանքը հիշեցնում է անտիկ ճարտարապետությունը։ Եկեղեցուն կից է բարձր քառահարկ զանգակատունը։ Ս. Համբարձում եկեղեցու պատերին արձանագրություններ չկան։ Վիմագրեր պահպանվել են գերեզմանատանը։ Դեռեւս 1967 թ. Դոնի տարածաշրջանի հայկական արձանագրությունները հավաքելիս՝ Գ. Գրիգորյանը նկատել է. «Յարդ գործող այս գերեզմանատան տապանագրերը հիմնականում թվագրված են ԺԹ. դարով։ Ավելի վաղ թվագրություն ունեցողները չեն պահպանվել»²⁰։ Կարծես ԺԸ. դարավերջի երկու տասնամյակի ընթացքում վախճանվածների (սրանք հիմնականում Ղրիմից օտար վայրեր ներգաղթածներն ու Չալթրի հիմնադիրներն են) մասին են ասված դոնահայերի ասացվածքի հետեւյալ խոսքերը. «Պանդուխտին գերեզմանը գետնին հետ հավսրվիլ է»²¹։

Մեր կողմից 2017 թ. ամռանը Չալթրի գերեզմանատանը գրանցվել են հետեւյալ տապանագրությունները.

¹⁵ Տե՛ս Հ. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ, նշվ. աշխ., էջ 12–13։

¹⁶ Տե՛ս անդ, էջ 99։

¹⁷ Տե՛ս անդ։

¹⁸ Տե՛ս անդ, էջ 103։

¹⁹ Տե՛ս անդ։

²⁰ «Դիվան հալ վիմագրության», պր. VIII, էջ 152։

²¹ «Դոնի հայերի առանձներն ու ասացվածքները», գրի առավ եւ կազմեց Շահեն Շահինյանը, Ռոստով, 1973, էջ 11։


1. Տապանաքար, ավազաքարից, 6 տող (սկզբնամասը ջնջված).



ԽԱՍ ՀԱՆԳՉԻ / ՄՐԱՐՄԻՆ... /
ԽԱԹԼԱՄԱՃԻԵԱՆԻ, / ԾՆԼԵԱԼ 1833 ԹՎԻ
ՀԼՈՒՆՎԱՐ ԼԻ 15-ԻՆ, / ՎԱՎՃԱՆԼԵԱԼ 1906
ԹՎԻ / ՕԳՐՈՄՆ ՏՈՍԻ 13-ԻՆ:

Խաթլամաջյանի անունը թեև ջնջված է, բայց կարծես տառահետքերով վերականգնվում է ՄԿՐՏԻՃ(°): Հետաքրքիր է, որ ՎԱԽՃԱՆԼԵԱԼ-ի փոխարեն փորագրված է ՎԱՎՃԱՆԼԵԱԼ: Փորագրիչը, անշուշտ, նախապես որոշված ՎԱԽՃԱՆԼԵԱԼ բառում «խ» տառի փոխարեն սխալմամբ քանդակել է «վ»: Մկրտիչի հայրը եղել է Մարգարը, հետեւապես՝ ջնջված երկրորդ տողում եղել է ՄԿՐՏԻՃ ՄԱՐԳԱՐԵԱՆ: Մկրտիչը նկարիչ Սեյրան Խաթլամաջյանի ապուլապան է:

2. Տապանաքար, ավազաքարից, 1 տող.



Սա

Անշուշտ, փորձ է արվել հիշատակագրություն փորագրելու, սակայն անհայտ պատճառներով մնացել է կիսատ: Սա բառը գրված է բոլորգիր:

3. Տապանաքար, ավազաքարից, 3 տող.

ԱՍՏ է ՄԱՐՄԻՆ ՍԱՀԱԿ / ԽԱԹԼԱՄԱՃԻԵԱՆԻ, / ՎԱԽՃԱՆԼԵԱԼ 1907 ԱՄԻ, 84 ՏԱՐԼԵԿԱՆՈՒՄ:

Ուշագրավ է, որ առաջին բառում նույն «Տ» տառը փորագրված է երկաթագիր, իսկ վերջինում՝ բոլորգիր («տ»):


Խաթլամաջյան տոհմից 1846 թ. հիշատակվում է Դանիկ Խաթլամաջին, որը Դոնի հայկական գյուղերի եւ Նոր Նախիջեւան քաղաքի



աղայական դասի միջև ընթացող հողային վեճերի պատճառով ծագած սուր բախումների ժամանակ նախատեսվող բանակցությունների համար գյուղացիների կողմից ընտրված երեք պատվավոր ծերերից մեկն էր, որոնք մեկուսացվեցին եւ երկու ամիս պահվեցին Նոր Նախիջեւանի բանտում²²:

Ի դեպ, խաթվամաշյանները ամենամեծ տոհմն են համայն Դոնի գյուղերում եւ Նոր Նախիջեւանում: Այսօր նրանք, Ռուսաստանից բացի, բնակվում են շուրջ 10 երկրում:

4. Մահարձան, գորշավուն, արեւմտյան երեսին 7 տող.



ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՐ/ՄԻՆ ԱՍՏՈՒԱԾ/ԱՏՐԻ ԳՐԻ-ԳՈՐԵԱՆ/ ԽՏՐՈՂԱՌԵԱՆ, / ԾՆԵԱԼ 1872 ԱՄԻ / 6 ՕԳՆՈՍՈՍԻ, ՎԱԽԼՃԱՆԵԱԼ 1911/ ԱՄԻ 16 ՆՈՅԼԵՄԲԵՐԻ:

Փորագրիչը ՕԳՆՈՍՈՍՍ բառի համառոտագրությունում՝ ՕԳ., մոռացել է դնել «Գ» տառի փոքր ստեղծը, որի արդյունքում վերջինս նմանվել է «Կ»-ի:

Խտրողույանները բնիկ չաթրցիներ չեն. նրանք Չաթր եկել են Նոր Նախիջեւանից ԺԹ. դարասկզբին: Այնտեղ եղել են քաղաքային մանր ազնվականության ներկայացուցիչներ: Խտրողույանները երբեմն գրվել են նաեւ Խդրյաններ կամ Խդիրյաններ: Խտրողույաններն այսօր փոքրաթիվ են՝ շուրջ 10 ընտանիք, որոնք բնակվում են Դոնի Մյասնիկյանի շրջանում եւ Ռոստով քաղաքում:

5. Տապանաքար, ավազաքարից, 3 տող.


ԱՍՏ Է ՄԱՐՄԻՆ / ԽԱՉԱՏՐԻ ՓՈՒԴԵԱՆԻ, / ԾՆԵԱԼ 1863 ԹՎԻՆ, ՎԱԽԼՃԱՆԵԱԼ 1913:

ԱՍՏ Է ՄԱՐՄԻՆ
ԽԱՉԱՏՐԻ ՓՈՒԴԵԱՆԻ
ԾՆ. 1863 թ. ՎԱԽ 1913

Փուլյանները բնիկ չաթրցիներ են: Նրանց մեծ մասն այսօր եւս ապրում է հայրենի գյուղում եւ Դոնի Ռոստով քաղաքում:

²² Տե՛ս Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմություն (1779–1861 թթ.), էջ 355:

6. Մահարձան, գորշավուն, արեւմտյան երեսին 8 տող.




ԱՍՏ ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ / ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ / ԹՈԽԹԱՄԻՇԵԱՆ, / ԾՆԼԵԱԼ Ի 3-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ / 1859 ԱՄԻ ԵՒ / ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 6-Ն ՄԵՂՏԵՄԲԵՐԻ / 1906 ԱՄԻ:

Վերջին տողը, որում թվականն է, գծվար է երեւում:

Թոխթամիշյանները նույնպես բնիկներ են: Նրանք մեծ մասն այսօր ապրում է Չալթր գյուղում եւ Դոնի Ռոստով քաղաքում:

7. Տապանաքար, օրորոցաձեւ, փոքր, 5 տող.


ՅԻՇԱՏԱԿ ԵՂԲՆՈՐՆ՝ / ՕԼԱՆՅԱՆ ՆԱՀՂԱՂՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ / 1913–1916, / ՂԴՄԱՐՔՈՒՄԻՑ՝:



Տապանագրությունը կատարված է բոլորգիր:

Օլանյանները տեղաբնիկներ չեն. նրանք Չալթր եկել են Սուլթան Սալա գյուղից, անգամ գալու թվականն է հայտնի՝ 1815 թ.²³: Օլանյաններն այսօր, բացի Չալթրից եւ Դոնի Ռոստովից, բնակվում են նաեւ Մոսկվայում ու Երեւանում: Հայաստանում նրանք գրվում են Ալանյաններ:

8. Տապանաքար, գորշ ավազաքարից, 7 տող.



ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՐՄԻՆ / ԱՋԱՐԻԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ / ԱԹՈՆԵԱՆ, / ԾՆԵԱԼ ԵՒ 30 ԱՊ ՂԴՐԻԼԻ ... / ՎԱԽՃԱՆԵԱԼ ԵՒ ... / ... / ...

Տապանաքարը խիստ հողմնահարված է, գրվածքն ամբողջությամբ չի վերականգնվում:

Աթոյաններն ի սկզբանե զբաղվել են առեւտրով եւ աշխատել կրթության ոլորտում:

²³ Տե՛ս ГАО, Ф. 376, ОП. 1, Д34, Л. 1806-19, 6406-65:

Նրանց մի ներկայացուցիչ Առաջին աշխարհամարտի ընթացքում վարել է Չալթրի գեղջավազի պաշտոնը: Ըստ Վ. Բարխուդարյանի աշխատության՝ «Գաղութ» պարբերականի 1915 թ. 35-րդ համարում հրապարակվում է մի հոդված, որի համաձայն՝ Չալթր գյուղի ավագ Գ. Աթոյանը, առանց որեւէ հիմքի, «զոռալայության» երկու օրով ձերբակալում է թեմականավարտ Գ. Զալաչյանին²⁴: Վ. Բարխուդարյանի գնահատմամբ՝ «...սեփական հողամասերը մեծացնող եւ այլ ուղիներով հարստացող գյուղերի պետերը, իհարկե, ինչպես եւ պետք էր սպասել, աստիճանաբար ընդարձակում են նաեւ իրավասությունները, դառնում ինքնիշխան ու օրինազանց»²⁵:


9. Տապանաքար, նույնատիպ, 10 տող.

ԱՍՏ / ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ ՎԱՐԴԱՆ /
ՊՕՂՈՍԻ / ՓՈԽՏԵՅՆԱՆՑ, / ԾՆԼԵԱՂ
Է Ի 8 ՅԼՈՒՂՆՎԱՂԻ / 1888 ԱՄԻ ԵԻ
ՎԱՂ ԽՃԼԱՆԵԱՂԻ / 18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1909/
ԱՄԻ Ի ՉԱԼԹՐ / ԳԵՂՋԻ: Գ. Թ. Խ.²⁶:

ԱՍՏ
ՀԱՆԳՁԻ
ՄԱՐՄԻՆ ՎԱՐԴԱՆ
ՊՕՂՈՍԻ
ՓՈԽՏԵՅՆԱՆՑ
ԾՆԼԵՒԹՅԱՆ
1888 ԱՄԻ ԵԻ
18 ՀՈԿՏ. 1909
ԱՄԻ ԻՋԱԼՐՐ
ԳԵՂՋԻ Գ ԹԽ

Վերջին համառոտագրված տառերի առնչությամբ Գ. Գրիգորյանը միանգամայն իրավամբ ենթադրել է. «Հավանաբար, փորագրող վարպետի կամ կանգնեցնողի անուն-ազգանվան գլխատառերն են»²⁷:

10. Տապանաքար, նույնատիպ, 5 տող.



.../... ՏԷՐ-/ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ / ՔՐԻ/
ՍՅՈՍԼԱՂ ՏՈՒՐ ԵԱՆՑ՝²⁸:

Եղծվածության պատճառով տապանագրության սկզբնամասը չի ընթերցվում: Քրիստոսատուրյանները շուրջ 80 տարի եղել են Չալթր գյուղի հոգեւորականները:

²⁴ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմություն (1861–1917 թթ.), էջ 141:

²⁵ Տե՛ս անդ:

²⁶ «Դիվան հայ վիմագրության», պր. VIII, էջ 152:

²⁷ Տե՛ս անդ:

²⁸ Տե՛ս անդ:

Մի քանի արձանագրություն նույն գերեզմանոցից, որոնք մենք չենք տեսել, հաջորդական համարակալմամբ մեջ ենք բերում Գ. Գրիգորյանի կազմած ժողովածուից²⁹.

11. Տապանաքարին՝

ՀԱՅԿԱՆՈՒՇ / ԽՈՒՆԻՅԱՆ:

12. Տապանաքարին՝

ՎԱՐԴԱՆՈՒՇ / ԽՈՒՆԻՅԱՆ:

13. Տապանաքարին՝

ՌԵԲԵԿԱՅ / ԽՈՒՆԻՅԱՆ:

14. Տապանաքար, խաչաձև քանդակներով, 8 տող երեսին.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ / ՄԱՀՏԵՍԻ / ԱԾԱՏՈՒՐ / ԽՈՒՆԻՅԱՆԻ, / ԾՆԵԱԼ
Ի 12 ՕԳՈՍՏՈՍԻ 1823, / ՎԱԽՃԱՆԵԱԼ Է / Ի 18 ԴԵԿՏ. 1904:

Խռիսյանները (Խըռխըռյաններ) եղել են առևտրականներ, Չալթր գյուղում ունեցել են մի քանի խանութ: Խորհրդային տարիներին նրանցից շատերը ենթարկվել են հալածանքների: Հայտնի էին իրենց բարեպաշտությունը. այդ տոհմի մի քանի ընտանիք ուխտագնացություններ է կատարել Երուսաղեմի սրբազան վայրեր: Ահա վասիկ, դա է վկայում վերոհիշյալ վիմագիրը:

Նորնախիջեանցիներին, առհասարակ դոնահայերին քաջածանոթ Երվանդ Շահազիզն ուշագրավ տեղեկություններ է հայտնում տեղի մահտեսիների վերաբերյալ. «Նախիջեանցիք հեռաւոր ուխտագնացութիւն կատարում են՝ գնալով Երուսաղէմ, Մշոյ Ս. Կարապետ եւ Ս. Էջմիածին: Նոքա շատ են սիրում «հաջի»³⁰ դառնալ, ուստի եւ իւրաքանչիւր նախիջեանցու մեծ բաղձանքն է, երբ նա հասակն առնում է, գնալ ս. քաղաքը, տեսնել ս. գերեզմանը, ս. գլխադիրը եւ արժանանալ ս. լոյսի տեսութեան: Սովորաբար գնում են Բարեկենդանին, մնում են Ս. Յակովբում ամբողջ Մեծ պասը, տեսնում են զատկական հանդէսները եւ վերադառնում են տուն... Ս. Էջմիածին նոքա գնում են առհասարակ մեռնորհնէքին՝ Հայաստանեայց Եկեղեցու այդ նուիրական հանդիսին ներկայ գտնուելու...»³¹:

²⁹ Տե՛ս անդ:

³⁰ Արաբ. جاح՝ մուսուլման ուխտագնաց:

³¹ Ե. ՇԱՀԱԶԻԶ, Նոր Նախիջեանը եւ նորնախիջեանցիք, Թիֆլիս, 1903, էջ 180:

15. Դամբարանային կառույց երկաթե, կիսականգուն վիճակում, շուրջը՝ ձուլածո 10 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ / ՔԵՐՈՎԲԷԻ / ՍԵՐՈՎԲԵԱՆ / ԽՈՒՌՏԱԵԱՆ, / ՈՐ ԾՆԵԱԼ Է / Ի 27 ՅԻՆԻՍԻ / 1883 ԱՄԻ, ՎԱԽՃ. 1899 ԱՄԻ Ի 29 / ՀՈԿՏԵՄԲԵՐԻ³²:

Ուշադրության արժանի է հանգամանքը, որ հայր ու որդի անվանակոչված են ի պատիվ հրեշտակների, որոնք հարատեւ փառաբանում են Աստծուն, պահպանում Նրա գահը, հովանի լինում երկրային խորաններին:

Խուռտայանները եղել են հմուտ երկրագործներ ու այգեգործներ, ինչպես գրեթե բոլոր չալթրցիները, որոնք զբաղվել են հացահատիկային բույսերի մշակմամբ, անասնապահությամբ, նաեւ եղել են ճանաչված արհեստավորներ:

Չալթր մեծ գյուղի եզերքին կանգնած է կարմիր աղյուսից կառուցված մի նորաշեն հուշարձան, որի վրա ագուցված է տեղական գորշավուն շերտաքարից պատրաստված խաչքար: Այն ունի դոնյան հայկական տապանաքարերին բնորոշ պատկերաքանդակներ. կենտրոնում քանդակված է լուսաշող խաչ, որի ճառագայթների թիվը կարծես խորհրդանշում է 12 առաքյալներին, ամենավերեւում Սուրբ Երրորդությունը խորհրդանշող երկու կիսաշրջան է (Ղրիմ, Դոն): Դրանցից ներքեւ հավերժության երկու նշան է (արեւ, լուսին, որոնք իրար հետ պատկերվում են դեռեւս հայկական ժայռապատկերներում, ինչպես նաեւ միջնադարյան խաչքարերի վրա): Խաչի բնին պատկերված է թեք տախտակ՝ ինչպես բնորոշ է ռուսականին: Խաչի պատվանդանից՝ բնի երկու կողքերին վեր են խոյանում նիզակ ու գավազան: Խաչքարի կողքին՝ պատի վրա ամրացված սեւ վահանակի երկլեզու գրությունն ազդարարում է.


ՃԱՄՓՈՐԴ, ԿԱՆԳՆԻՐ ԵՒ ԵՐԿՐՊԱԳԻՐ
ԱՌԱՋԻՆ ՉԱԼԹՐՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ПУТНИК, ОСТАНОВИСЬ И ПОКЛОНИСЬ
ПАМЯТИ ПЕРВЫХ ЧАЛТЫРЦЕВ

Այդ հուշակոթողի մոտ կան մի քանի միանման շիրմաքարեր:

³² «Դիվան հայ վիմագրության», պր. VIII, էջ 152:

16. Տապանաքար, գորշ ավազաքարից, միայն թվականը.



1839

17. Տապանաքար, նույնատիպ, միայն թվականը՝ այն էլ հակառակ փորագրված.

1840

1840

Մշուսների վրա որեւէ գիր առկա չէ: Դա գուցե եղել է առաջին չաթրցիների կամքը:

РЕЗЮМЕ

Большое армянское село Чалтырь — административный центр Мясниканского района Ростовской области Российской Федерации, населенный армянами. Известно, что его основали армяне-переселенцы из Крыма в Донской бассейн по указу императрицы Екатерины II (1762—1796) в 1778 году. Армянские надписи Донского региона, в том числе и села Чалтырь, в 1967 году собрал и в 1999 году включил в VII том «Свод армянских надписей» (Российская Федерация) Г. Григорян.

Эпиграфическое наследие села пополнялось нами в 2017 году около одним десятком новых материалов из сельского кладбища. В них упоминаются представители известных родов в селе и регионе, которые сыграли важнейшую роль в жизни армянской колонии.

SUMMARY

The Armenian village of Chalter is a big village in Myasnikyan/Myasnikov region in Rostov-on-Don, Russian Federation. It is known that it was founded by the Armenians, who migrated from the Crimea, due to the order of Empress Catherine II (1762—1796) in 1778. The Armenian inscriptions of Don Region, as well as those of Chalter were collected by G. Grigoryan (in 1967) and afterwards were included in the “Book of Armenian Inscriptions” in 1999. The Chalter heritage of inscriptions was supplemented with approximately 10 new inscriptions, found in the cemetery of the village. They contain important information on the representatives of noble families, who greatly contributed to the establishment and prosperity of the community.

